

ЯЗЫКОЗНАНИЕ, ЛИНГВИСТИКА, ЛИТЕРАТУРА

Սկզբունքային բանակցությունների դիսկուրսի ուսումնասիրությունը՝ դասական հռետորաբանության և սիներգետիկ հարացույցի տեսանկյունից

Բաղրամյան Ռուզաննա Է.

բ.գ.թ., ավագ դասախոս, Լեզուների ամբիոն, Կառավարման ֆակուլտետ, ՀՊՏՀ (Երևան, ՀՀ)

 <https://orcid.org/0000-0001-9056-0842>

rouzannabaghramyan@gmail.com

ՀՏԳ՝ 81՝33, 81՝42; EDN: NDVNHD

DOI: 10.58587/18292437-2025.1-119

Հանգուցաբառեր և բառակապակցություններ՝ սկզբունքային բանակցություններ, հռետորաբանություն, սիներգետիկ մեթոդ, սիներգետիկ լեզվաբանություն

Исследование дискурса принципиальных переговоров с точки зрения классической риторики и синергетической парадигмы

Баграмян Рузанна Э.

к.ф.н., старший преподаватель, Кафедра языков, Факультет Управления, АГЭУ (Ереван, РА)

Аннотация. В данной статье рассматривается эффективность применения синергетического метода для анализа дискурса принципиальных переговоров. Основу переговорного дискурса составляют компоненты классической риторики – этос, пафос и логос, через которые проявляются ключевые ценности принципиальных переговоров. Переговорный дискурс представляет собой сложную систему, обусловленную множественными компонентами, интралингвистическими и экстралингвистическими факторами. Эффективный анализ этой системы требует владения методологией исследования сложных систем. Такой анализ можно провести с помощью синергетического подхода, который позволяет всесторонне исследовать переговорный дискурс, рассматривая его как открытую систему, где действует принцип самоорганизации и самоформирования элементов составляющих этот дискурс.

Ключевые слова и словосочетания: принципиальные переговоры, риторика, синергетическая парадигма, лингвосинергетика

The Study of Principled Negotiation Discourse from the Perspective of Classical Rhetoric and Synergetic Paradigm

Baghranyan Ruzanna E.

PhD, senior lecturer, Chair of Languages, Faculty of Management, ASUE (Yerevan, RA)

Abstract. This article examines the effectiveness of using the synergistic method during the analysis of the discourse of principled negotiations. The basic framework of the negotiation discourse encompasses the components of classical rhetoric – ethos, pathos, logos, through which the merits of principled negotiations are generally implemented. Negotiation discourse is a complex system conditioned by multi-component, intralinguistic and extralinguistic factors, the effective analysis of which implies competence in the methodology of complex systems. Thus, in order to perform such analysis, the synergistic method should be applied, which allows the researchers to conduct a multifaceted study of the negotiation discourse, considering it as a non-linear, open-system where the synergetic laws of self-organization and self-formation function.

Keywords & phrases: principled negotiation, rhetorics, synergetic paradigm, linguistic synergetics

Ներածություն

Այն աշխարհը, որում մենք ապրում ենք այլևս օրինաչափ, կառուցվածքային, կազմակերպված կեցավայր չէ, որտեղ հնարավոր է զարգանալ՝ հետևելով որոշակի ընդունված օրենքների և կարգերի: Համաշխարհայանցման գործընթացը հետևողականորեն վերացնում է ընդունված կարգերն ու սահմանները, իսկ արհեստական բանականությունն օրեցօր վերազդում է նորերը, որոնց արդիականությունը շատ հաճախ ձգվում է մի քանի ժամից մինչև մի

քանի ամիս: Ժամանակավրեպ դառնալու վտանգը առկա է գրեթե բոլոր ոլորտներում: Հետևաբար, անհրաժեշտ է վերանայել տարբեր ոլորտներին առնչվող մոտեցումները, մեթոդները, փորձել դրանք համադրել, ձևավորել նոր մոտեցումներ և մեթոդներ՝ ներկայիս պահանջներին համապատասխան: Բանակցային դիսկուրսը, առավել քան դիկտուրսի այլ տեսակ, զգալիորեն ազդվել է համաշխարհայնացումից և որոշակիորեն փոփոխել իր ավանդական կառուցվածքը: Օրինակ՝ եթե, մինչ օրս, բանակ-

ցային դիսկուրսը դիտարկվել է որպես սահմանակարգային դիսկուրսի տարատեսակ, որտեղ առկա են ընդունված փուլերի հաջորդականությունը, համարժեք լեզվական միավորները, շարժումային արտահայտությունները, համապատասխան միջավայրը և այլն, սպա այժմ, այն դուրս է եկել իր նախագծած սահմաններից և առկայացնում է տվյալ իրավիճակին համապատասխան «խրթին» դիսկուրս՝ բանակցային նպատակներին հասնելու համար: Այսինքն, այստեղ գործ ունենք բարդ համակարգի հետ, որը պահմանավորված է ոչ միայն այն հանգամանքով, որ այն ներառում է բազմաշերտ և հակասող տարրեր, այլ նաև նրանով, որ այդ տարրերը դրսևորում են բարդ վարքագիծ: Հարկ է նշել, որ լեզուն կենդանի, զարգացող համակարգ է, և վերջինիս բաղադրիչները գտնվում են շարունակական փոփոխվող գործընթացների մեջ՝ դրսևորելով հաճախ անկանոն վարքագիծ: Նմանատիպ բարդ դիսկուրսը վերլուծելու համար անհրաժեշտ է բարդ մեթոդի կիրառում, որը գիտականորեն կրացատրի և կիմաստավորի նմանատիպ դիսկուրսի առկայացման արդյունավետությունը:

Սույն հետազոտության շրջանակում ուսումնասիրվել և առանձնացվել է սիներգետիկ մեթոդը՝ որպես բանակցային դիսկուրսի վերլուծության ուղենիշ, քանզի սիներգետիկայի անկյունաքարը ցանկացած երևույթը (տվյալ պարագայում բանակցային դիսկուրսը) ձևավորող տարրերի «քառասյին ազատությունն» է, որոնք առաջին հայացքից թվում են անկառավարելի, սակայն բանակցության ընթացքում ի հայտ են գալիս և առանձնանում այդ տարրերի այնպիսի հատկանիշներ, որոնց միջոցով վերջիններս կարող են միանալ, մեկ այլ, առաջին հայացքից հակասող, անհամատեղելի թվացող տարրերի հետ և ստեղծել բարենպաստ հարթակ՝ բանակցային հաջորդ փուլի համար:

«Սիներգիա» տերմինը ներմուծել է գերմանացի ֆիզիկոս Հ. Հակենը 1970-ական թվականներին: Հունարենից թարգմանաբար «սիներգիան» նշանակում է համատեղ աշխատանք: Այստեղից էլ առաջացել է սիներգետիկա գիտությունը, որի «առանձնահատկությունը որպես նոր գիտական ճյուղի կայանում է նրանում, որ այն չի մերժում դասական գիտության օրենքները, այլ լրացնում և ամբողջականացնում է դրանք՝ առաջարկելով ուսումնասիրվող առարկաները դիտել հետազոտական այլ տեսանկյունից» [11, էջ 417]: «Սիներգետիկայի հիմնական հասկացություններն են՝ համակցումը/ինտեգրումը, համադրումը, համագործակցությունը, համախմբվածությունը, ոչ գծայնությունը, շարժունությունը և զարգացումը: Վերջիններս կարող են օգտագործվել տարբեր բարդ համակարգեր նկարագրելու համար՝ ներառյալ լեզվական համակարգը» [8, էջ 28]:

Հարկ է առանձնացնել կանոնակարգված կամ պաշտոնականացված սիներգետիկան (formalised synergetics) (I. Prigogine, С. Капица, С. Курдюмов, Г. Малинецкий.), որն օգտագործվում է ֆիզիկայի, քիմիայի, մաթեմատիկայի, կենսաբանության և այլ ոլորտներում, և ոչ կանոնակարգված կամ պաշտոնականացված սիներգետիկան (non-formalised), որը հանդես է գալիս որպես յուրահատուկ կապ բնական և հումանիտար գիտությունների միջև:

Սիներգետիկ լեզվաբանությունը ձևավորվել է 1990-ական թվականներին՝ հիմք ընդունելով փիլիսոփայության, լեզվաբանության և սիներգետիկայի հայեցակարգերը: Սիներգետիկ լեզվաբանությունը ներառում է երկու հիմնական ճյուղեր՝ լեզվական սիներգետիկա (synergetics of language) և խոսքի սիներգետիկա (synergetics of speech). Խոսքի սիներգետիկան իր հերթին ներառում է տեքստի սիներգետիկա, դիսկուրսի սիներգետիկա, անհատական/իդյոլեզվաբանության սիներգետիկա, խոսքի փոփոխման/շեղման սիներգետիկա և այլն: Վ. Կարագինի անվան Խարկովի ազգային համալսարանի օտար լեզուների ֆակուլտետի ներքո գործում է դիսկուրսի սիներգետիկայի և լեզվագործաբանության դպրոց՝ Լ. Պիխտովիկովայի գլխավորությամբ, որտեղ ուսումնասիրվում և վերլուծվում են սիներգետիկ գործընթացները՝ տարատեսակ դիսկուրսներում: Այսօր, սիներգետիկ մոտեցումները կիրառելի են գրեթե բոլոր հասարակական գիտություններում՝ այդ թվում նաև ժամանակակից լեզվաբանության տարբեր գիտաճյուղերում (հոետորաբանություն, ճանաչողական լեզվաբանություն, ոճագիտություն, բառագիտություն, հոգելեզվաբանություն և այլն): Սիներգետիկ լեզվաբանության ոլորտում հետազոտություններ իրականացրել են՝ Տ. Դոմբրովանը, Լ. Պիխտովիկովան, Ս. Յենիկեյեվան, Ա. Պրիխոդկոն և այլք:

Ժամանակակից սիներգետիկ մոտեցումը հնարավորություն է ընձեռում հետազոտությունները անցկացնել տարբեր դիսկուրսների հատման արդյունքում ձևավորված ոլորտներում: Լ. Հարությունյանն իր «Տեսնեսական իրադարձության լեզվաճանաչողության մոդելավորումը» դոկտորական աշխատությունում անդրադառնում է մեդիա և տնտեսական դիսկուրսների հատմանը, որտեղ տարրերը ինքնակազմակերպվում են և ձևավորում դիսկուրսի նոր տեսակ: «Տեսնեսական մեդիադիսկուրսը խոսույթային յուրօրինակ համաձուլվածք է, հնարավոր այլընտրանքային աշխարհ, որն ունի բնորոշ գծեր և առանձնահատկություններ» [1, էջ 65]:

Անդրադառնալով բանակցային դիսկուրսի հոետորաբանությանը, փաստենք, որ ժամանակակից հոետորաբանությունը, որն արտացոլում է տեղեկատվական տեխնոլոգիաների ժամանա-

կաշրջանը, չի կարող տեղավորվել մեկ հստակ ձևակերպման մեջ կամ ունենալ հստակ գծանշված գործառնություններ: Ի. Աննենկովան իր «Место риторики в зарубежной и отечественной филологии» հոդվածում դիտարկում է հռետորաբանությունը որպես սիներգետիկ երևույթ: «Գործառական, հաղորդակցական, ճանաչողական, տեքստակենտրոն, գործաբանական, հուզական և այլ հասկացությունների սիներգետիկան սպասիրվում է գիտության մեջ ամբողջականի ձևավորումը, այսինքն մարդու լեզվի և լեզվական գործունեության ծավալում, ամբողջական պատկերացումը: Տարբեր մոտեցումների այս համադրումն անեց, ի թիվս այլ բաների, «վերականգնված» հնագույն հռետորաբանության գաղափարների և մեթոդների գիտական համատեքստ վերադառնալու ժամանակ» [2, էջ 6]: Սիներգետիկայի տեսանկյունից դատելով, կարելի է ենթադրել, որ հռետորաբանության լայն շրջանակն ընդգրկող գիտակարգերը, վերջիններիս տարրերը կարող են ինքնակազմակերպվել՝ փոխազդելով միմյանց հետ, և ստեղծել նոր բաղադրիչներ, ենթատեսակներ, ձևավորել արդի գիտաճյուղեր, ինչպիսիք են ճանաչողական լեզվաբանությունը, սիներգետիկ լեզվաբանությունը և այլն: Չնայած ժամանակակից մոտեցումներին և մեկնաբանություններին, այնուամենայնիվ, բանակցային դիսկուրսի հիմնարար սյուներից եղել և մնում է դասական հռետորաբանությունը: «Հռետորաբանությունը ընկալվել է 20-րդ դարի սկզբից որպես խոսքի միջոցների հնացած համակարգ, որը չի ազդում որևէ մեկի վրա: Մակայն, երբ այս մոռացված գիտակարգի վրայից թողափեցին դարերի փոշին և ուշադիր նայեցին նրա դասական տեսքին, պարզվեց, որ այն հույս և հարգանք է ներշնչում. պարզվեց թե որքան արդիական, խորը և նրբորեն զարգացած է հռետորական հասկացությունների համակարգը» [6, էջ 32]:

Հռետորաբանությունը կամ հռետորական արվեստը առաջացել է Հին Հունաստանում, որտեղ այն դիտարկվում էր որպես համոզելու արվեստ: Հռոմեական կայսրության դարաշրջանում հռետորաբանությունը գեղեցիկ խոսելու արվեստն էր, իսկ վերածննդի ժամանակաշրջանում հռետորաբանությունը համարում էին խոսքը զարդարելու արվեստ: «Դասական իմաստով հռետորաբանությունը կամ հռետորությունը ճառ պատրաստելու, կառուցելու և հրապարակայնորեն մատուցելու գիտությունն ու արվեստն է՝ հանդիսատեսի վրա ցանկալի ազդեցություն ունենալու նպատակով» [4, էջեր 5-6]: Հռետորաբանության արվեստն ուսումնասիրելու, վերլուծելու, վերջինիս արդիականությունն ու արդյունավետությունը ընկալելու համար, նախևառաջ պետք է անդրադարձ կատարել հռետորաբանության ակունքներին և առանձնացնել այն հիմնասյուները, որոնց վրա կառուցվել է հռետո-

րաբանությունը և հիմք դարձել որոշ տեսությունների առաջացման համար: Օրինակ, դասական հռետորաբանության հենքի վրա ձևավորվել է զանգվածային հաղորդակցության տեսությունը, ենթադրության տեսությունը, փաստարկման տեսությունը և այլն:

Հռետորաբանության առանցքային համակարգը կազմավորել և զարգացրել է հին հույն փիլիսոփա Արիստոտելը՝ մ.թ.ա. 4 դարում: «Մահմանենք հռետորաբանությունը որպես ցանկացած թեմայի շուրջ համոզելու հնարավոր ուղիներ գտնելու կարողություն»: «Հռետորաբանության խնդիրը ոչ թե համոզելն է, այլ յուրաքանչյուր խնդրի համար համոզման ուղիներ գտնելը» [3, էջ 408]: Իր «Հռետորաբանություն» հայտնի աշխատությունում, Արիստոտելը առանձնացնում է համոզման 3 կարևորագույն բաղադրիչներ, որոնց վրա հիմնվելով, հռետորը պետք է կազմի իր համոզիչ խոսքը: Դրանք են՝ էթոս - հեղինակություն, բարեվարքություն, բարի կամք, պաթոս - էմոցիոնալ բաղադրիչ, լոգոս - փաստարկներ, տրամաբանական հիմնավորումներ: Արիստոտելը պնդում է, որ բաղադրիչները պետք է բաշխվեն հավասարաչափ, այսպես համոզման խոսքը չի լինի արդյունավետ և կղաղարի ծառայել իր վերջնապատակին: Եթե դիտարկենք սիներգետիկայի տեսանկյունից, ապա անգամ էթոսի սկզբնական բացակայության դեպքում, իրար հակասող բաղադրիչները (պաթոս և լոգոս) կարող են ինքնակազմակերպվել և, հատվելով, ձևավորել էթոս: Այսինքն, խոսողի ներկայացրած փաստերը և գրագետ դիսկուրսը միավորվելով նպաստում են տվյալ անձի էթոսի ձևավորմանը կամ, առկայության դեպքում՝ զարգացմանը: Նմանատիպ վերլուծությունը ենթադրում է ներառել նաև արտալեզվական միջոցների (վայր, արտաքին տեսք, կանգնելու դիրք և այլն) առանձնահատկությունները՝ որպես մեկ ընդհանուր նպատակի հասնելու օժանդակող տարրեր: Իր հերթին սկզբունքային բանակցությունների փիլիսոփայությունը ենթադրում է լեզվական այնպիսի միջոցների կիրառում, որոնք կօգնեն արդյունավետ կերպով հարթել տարաձայնությունները, գտնել ընդհանուր շահեր և խուսափել անձնական հակամարտություններից: Նման մոտեցումը շատ հաճախ պահանջում է իրարամերժ հենքի վրա ձևավորված դիսկուրս: «Ոչ մի այլ արվեստ չի անդրադառնում հսկառակ հիմքերից ստացված եզրակացություններին. միայն դիալեկտիկան և հռետորաբանությունն են անում դա, քանի որ երկուսն էլ հավասարաչափ կերպով գործ ունեն հսկադրությունների հետ» [3, էջ 407]: Հռետորաբանական փաստարկը էնթիմեման է, որը սիլլոգիզմի կրճատ տեսակ է, կիրառվում է հիմնականում բանավոր խոսքում, որի ենթա-

դրյալ բաց թողնված հատվածը կարելի է կռահել համատեքստից (ենթադրության տեսություն): Էնթիմեման շատ կիրառելի է սկզբունքային բանակցություններում, երբ նպատակն է քաղաքավարիորեն և նրբանկատորեն տատանվել կոշտ և մեղմ մոտեցումների միջև:

Հռետորաբանությունը պատմության ընթացքում, ընդլայնելով իր ազդեցության շրջանակը, նպաստել է նոր գիտակարգերի ձևավորմանը (գրականություն, էսթետիկա, ռնագիտություն, գործաբանություն, ճանաչողական գիտություններ), և այժմ էլ դրսևորվում է այդ գիտակարգերի միջոցով՝ ներառելով տարատեսակ ոլորտներ: Հետևաբար, էթե հռետորաբանությունը կիրառելի է գրեթե բոլոր բնագավառներում, ապա կարելի է դիտարկել այն որպես ընդհանուր հարթակ (platform), որտեղ տարբեր գիտակարգեր կարող են հատվել և ձևավորել նորը կամ դրսևորվել նորովի: Հարկ է նշել, որ հենց այս միավորող հատկության շնորհիվ է, որ հռետորաբանությունը վերածնունդ ապրեց 20-րդ դարում և դարձավ գիտության հարացույց (А. Михальская, Ю. Степанов, С. Аверинцев, W. Mann, S. Thompson և այլոք): Իսկ որպես այդ գիտակարգերի համալիր ուսումնասիրության մեթոդ կարելի է ընտրել սիներգետիկ մեթոդը, որն իր բնույթով միջառարկայական է, քանզի այն համադրում է բնական գիտություններում մշակված և ներդրված մեթոդները և հետազոտական հնարները, ունի աշխարհի հոլիստիկ ընկալում, որտեղ ամեն ինչ փոխկապակցված է և ամեն ինչ գտնվում է անդադար փոփոխման մեջ [11]:

Ինչպես արդեն նշել ենք բանակցային դիսկուրսը բարդ համակարգ է, որի ուսումնասիրությունը սիրնեգետիկ հարացույցի տեսանկյունից կօգնի ընկալել այն որպես մեկ ընդհանուր զարգացող ամբողջություն՝ կազմված փոխկապակցված, հաճախ իրարամերժ նյութական և ոչ նյութական (մտավոր կաղապարներ) տարրերից:

Քանի որ սույն հետազոտության համար որպես բանակցային դիսկուրսի ուսումնասիրման ուղենիշ ընտրվել է սկզբունքային բանակցությունների տեսակը, նախնառաջ փորձենք հասկանալ սկզբունքային բանակցությունների էությունը, ձևաչափը, առաջադրած դրույթները:

Ի սկզբանե փաստենք, որ բանակցել չի նշանակում պարտության մատնել մյուս կողմին: Ինչպես նշում է Չ. Նիրենբերգը. «Բանակցությունների նպատակը մահացած հակառակորդը չէ» [12, էջ 20]: Հետևաբար, ժամանակակից մարդը, ով արդեն իսկ ունի ապոստերիորի գիտելիքներ բանակցային մեթոդների և բանակցային դիսկուրսի վերաբերյալ, գիտակցում է բանակցային նոր ձևաչափի մշակման անհրա-

ժեշտությունը, որը հնարավորություն կտա հասնել ցանկալի արդյունքների, հարթել տարածայնությունները, գտնել ընդհանուր շահեր, կամ գնալ փոխզիջումների՝ առանց անձնական հակամարտության կամ «պարտվողի ախտանիշի»: Սկզբունքային բանակցությունների ձևաչափը հնարավորինս բավարարում է վերոգրյալ պահանջները: Սույն մեթոդը մշակել են Հարվարդի համալսարանի իրավագիտության պրոֆեսոր Ռոջեր Ֆիշերը, մարդաբան, բանակցությունների փորձագետ Ուլյամ Ուրին՝ «Հարվարդի բանակցային նախագծի» շրջանակներում (1979), որը նպատակաուղղված էր բանակցությունների և հակամարտությունների կարգավորման խնդիրներին: 1981 թ.-ին, սույն նախագծի շրջանակներում, ստեղծվեց «Համաձայնության հասնելու ուղին. Բանակցություններ առանց պարտվողների» աշխատությունը [12], որը համարվում է բոլոր ժամանակների ամենավաճառվող ոչ գեղարվեստական գործերից մեկը: Տվյալ աշխատությունում ներկայացվեց սկզբունքային բանակցությունների մեթոդը, որը հիմնված է «կոշտ մոտեցում խնդրի էության և մեղմ մոտեցում մասնակիցների նկատմամբ» սկզբունքի վրա: Սկզբունքային բանակցությունների մեթոդը ներառում է 4 հիմնական տարր.

1. Մարդիկ - տարանջատեք մարդկանց հիմանխնդրից

2. Ծահեր - կենտրոնացեք շահերի և ոչ թե դիրքերի վրա

3. Տարբերակներ - նախքան որոշում կայացնելը մշակեք մի շարք հնարավորություններ

4. Չափանիշներ - պնդեք, որպեսզի արդյունքը հիմնված լինի օբյեկտիվ չափորոշիչների վրա

Եթե փորձենք համադրել հռետորաբանության բաղադրիչները (էթոս, պաթոս, լոգոս) սկզբունքային բանակցությունների դրույթներին, ապա կունենանք հետևյալ պատկերը.



Հարկ է նշել, որ նմանատիպ գուգորդումը կայուն չէ, և, կախված բանակցությունների ընթացքից, բաղադրիչները կարող են փոխվել տեղերով, ինչպես նաև համագործակցել: Օրինակ, համապատասխան դիսկուրսով (պաթոս /մարդիկ) մարդկանց հիմնախնդրից առանձնացնելը (էթոս/շահեր) կարող է էականորեն արժևորել բանակցային կողմերից մեկի առաջարկած ոչ այնքան հիմնավոր փաստարկները

(լոգոս/տարբերակները, չափանիշները): Այստեղ նույնպես գործում է սիներգետիկայի սկզբունքը:

Սկզբունքային բանակցությունների մեթոդի հաջորդ առանցքային բաղադրիչը ԲՀԼԱ-ն է (Բանակցային համաձայնության լավագույն այլընտրանք, BATNA – Best Alternative to the Negotiated Agreement): «ԲՀԼԱ» եզրույթը ստեղծվել և առաջին անգամ կիրառվել է Ռ. Ֆիշերի և Վ. Ուրիի կողմից 1981 թ.-ին իրենց «Համաձայնության հասնելու ուղին. բանակցություններ առանց պարտվողների» աշխատության մեջ: Ըստ Ռ. Ֆիշերի և Ու. Ուրիի՝ կողմերը պետք է ընդլայնեն տարբերակները և նախապես զարգացնեն իրենց ԲՀԼԱ-ն: Դա լավագույն այլընտրանքն է, եթե բանակցությունները չեն հաջողում: Ըստ Լ. Թոմսոնի՝ «Ձեր ԲՀԼԱ-ն դառնում է զգայուն ժամանակի նկատմամբ՝ սկսած այն պահից, երբ դուք այն ներկայացնում եք: Ցանկացած պահի ձեր ԲՀԼԱ-ն կա՛ն բարելավվում է, կա՛ն վատթարանում շուկայական ուժերի, շրջակա միջավայրի և իրավիճակային պայմանների հետևանքով: Այսպիսով, բանակցողները պետք է անընդհատ փորձեն բարելավել իրենց ԲՀԼԱ-ները» [14, էջ 15]: Բանակցային դիսկուրսի տարրերի նման շարժունակ, փոփոխվող վարքագիծը բանակցային բարդ համակարգում ձևավորում է դիսկուրսի սիներգետիկ ուսումնասիրության պահանջ: Բանակցային դիսկուրսի սիներգետիկ գործառույթը նման է արհեստական բանակայնությանը օժտված բոտի (չաթբոտ/ChatGPT) գործառույթին: Չաթբոտը վայրկյանների ընթացքում ինքնակազմակերպում է իրեն հասանելի տեղակատվությունը, որի միակ սահմանափակումը կայանում է նրանում, որ այդ տեղեկատվությունը այնքան է, որքան, որ մարդիկ վերբեռնել են և շարունակում են վերբեռնել: Մյուս բոլոր առումներով գործում է սիներգետիկայի մեթոդը. ծրագիրը անհավանական լուծումներ է գտնում, ստեղծում նոր մեխանիզմներ՝ զարգացնելով նոր տրամաբանություն, որը մարդու տրամաբանությունից դուրս է կամ դեռևս ոչ ընկալելի: Նմանապես բանակցային հաջողված ռազմավարությունը չի կարող ենթադրել սահմանափակ կամ գծային դիսկուրս, որտեղ ամեն ինչ կանոնակարգված է, այլ ենթադրում է սկզբունքային բանակցությունների չորս արժեքներով սահմանանշված ազատ տարածություն, որտեղ լեզվական և արտալեզվական տարատեսակ միավորները պետք է ինքնակազմակերպվեն, ընտրեն բանակցային նպատակներից մեկը, կամ հնարավոր ընդունելի տարբերակը (ԲՀԼԱ), որպեսզի առաջ մղեն բանակցային գործընթացը: Լ. Պիստովնիկովան նշում է, որ ինքնակազմակերպվող համակարգերում նման իրավիճակը անվանում են երկփեղկման կետ, երբ համակարգը կայուն չէ և ենթակա է փոփոխությունների: Եվ մենք ինչպե՛ս

կարող ենք մեկնաբանել նման գործընթացները, եթե գործ ունենանք զուտ կայուն լեզվի հետ՝ անտեսելով երկփեղկման կետի առկայությունը [7, էջ 40]: Սկզբունքային բանակցություններում երկփեղկման կետը առկա է ողջ գործընթացի ընթացքում: Արժեքներից մեկը առկայացնելու համար երբեմն անհրաժեշտ է երկփեղկել մյուս արժեքներից մեկը, առկայացնել մասամբ, իսկ մյուս մասը միավորել մեկ այլ տարրի հետ (օրինակ՝ ԲՀԼԱ-ն բարելավելու կամ խնդրո առարկայի նկատմամբ կոշտ վերաբերմունք ցուցաբերելու նպատակով): Այսինքն, գործ ունենք բարդ համակարգի հետ, որի ուսումնասիրությունը, հաշվի առնելով մարդու գործունեության տարբեր ոլորտների զարգացման արագությունը, առավել արդյունավետ է իրականացնել սիներգետիկ լեզվաբանության տիրույթում:

Եզրակացություն

Համաշխարհայնացումը և արհեստական բանականությունը ոչ միայն արագացրել են լեզվի զարգացման տեմպերը, այլև ենթարկել այն որոշ առումով «գենետիկ» փոփոխության: Այդ փոփոխությունները ընկալելու և վերլուծելու համար արդեն իսկ հիմք է ծառայում արհեստական բանակությունը և վերջինիս ստեղծած/գեներացրած լեզուն, որը մարդիկ փոխառում և կիրառում են օրինակ բանակցային դիսկուրսում: Հետևաբար, նմանատիպ դիսկուրսի ուսումնասիրությունը պահանջում է չաթբոտի մեխանիզմին համարժեք մեթոդ: Սիներգետիկ մեթոդի կիրառումը նոր հնարավորություններ է ընձեռում գիտական հանրույթին՝ դիտարկելու բանակցային դիսկուրսը որպես բարդ, շարժունակ, ամբողջական համակարգ, որտեղ դասական գիտական հարացույցից կամ տրամաբանական բացատրությունից դուրս գտնվող խրթին լեզվական գործընթացները ստանում են գիտական բնորոշումներ՝ լեզվի սիներգետիկ հատկանիշների և վերջիններիս ուսումնասիրության շնորհիվ: Սիներգետիկ լեզվաբանությունը դիսկուրսի ուսումնասիրությունը տեղափոխում է մեկ այլ հարթություն, որտեղ պահպանվում են ավանդական դասական մոտեցումները (հռետորաբանության Արիստոտելյան կաղապարը), իսկ առկա բացերը ամբողջանում են տարրերի ինքնակազմավորվող, ինքնակառավարվող հատկությունների շնորհիվ: Սկզբունքային բանակացությունների փիլիսոփայությունը ենթադրում է առավել կենտրոնացում բանակացային գործընթացի վրա, որը քայլ առ քայլ կհանգեցնի ցանկալի արդյունքի: Իսկ բանակցային գործընթացը տարատեսակ դիկուրսներից միահյուսված բարդ համակարգ է, որտեղ լեզվական և արտալեզվական տարրերի վարքագիծը ենթակա է արդյունավետ և տրա-

մարանական վերլուծության, եթե այն դիտարկենք սիներգետիկ հարացույցի տեսանկյունից:

Օգտագործված գրականության ցանկ

1. **Հարությունյան Լ.** Տնտեսական իրադարձության լեզվաճանաչողական մոդելավորումը // դոկտորի գիտական աստիճանի հայցման ատենախոսություն, 2017:
2. **Аверинцев С. С.** Риторика и истоки европейской литературной традиции. – Москва: Школа «Языки Русской Культуры», 1996. – 448 с.
3. **Анненкова И. В.** Место риторики в зарубежной и отечественной филологии // Филология: научные исследования 2 (06), 2012. https://nbpublish.com/library_get_pdf.php?id=1884_1
4. **Аристотель.** Этика, политика, риторика, избранные афоризмы. – Москва: изд-во «Эксмо». 2021.
5. **Замелтдинова Г. Ф.** Основы риторики: учебно-методическое пособие. – Казань: изд-во Казан. ун-та, 2016.
6. **Степанов Ю. С.** В трехмерном пространстве языка: Семантические проблемы лингвистики, философии, искусства. – Москва: изд-во «Наука», с. 334, 1985.
7. **Капица С. П., Курдюмов С. П., Малинецкий Г. Г.** Синергетика и прогнозы будущего. – Москва: Наука, 1997.
8. **Михальская А. К.** Основы риторики, 10-11кл. // Учебник для общеобразоват. учреждений. – Москва: изд-во «Дрофа», 2001.
9. **Пихтовникова Л.** Синергетика в филологии – наука настоящего и будущего: перспектива изучения в университетах Украины. // Новый коллегіум, (4), с. 39–42, 2018.
10. **Приходько А. Н.** Самоорганизация концептивных систем и межкультурный трансфер концептов. – Харьков: ХНУ, им. В.Н. Каразина, с. 135-154, 2015.
11. **Dombrovan T.** An Introduction to Linguistic Synergetics. Cambridge: Cambridge Scholars Publishing, 2018.
12. **Fisher, R. Ury, W. and Patton, B.** Getting to Yes: Negotiating Agreement without Giving in. London: Penguin Publishing Group, 2011
13. **Haken, H.** Synergetics. An introduction. (Springer Series in Synergetics). Berlin: Springer-Verlag, 3rd edition, 1983.
14. **Klymenko O. and Yenikeyeva S.** Synergetic Linguistics as a New Philosophy of Language Studies, 12(2), 2022 pp. 417-423 <https://doi.org/10.17507/tpls.1202.28>
15. **Mann, W.C., Thompson, S.A.** Rhetorical Structure Theory: Toward a Functional Theory of Text Organization // Third Text, 8(3), pp. 243-28, 1988. <https://doi.org/10.1515/text.1.1988.8.3.243>
16. **Nierenberg G. I.** The Art of Negotiating. New York: Barnes & Noble Books, 1998.
17. **Prigogine I.** The Philosophy of Instability. Futures, 21(4), pp 369-400, 1989. [https://doi.org/10.1016/S0016-3287\(89\)80009-6](https://doi.org/10.1016/S0016-3287(89)80009-6)
18. **Thomson Leigh L.** The Mind and Heart of the negotiator. Pearson, 2012.

Տճննվել է՝ 18.01.2025

Րեցենզրվոննվել է՝ 27.01.2025

Քրրրրրրվել է՝ 03.02.2025